Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022 թվականի նոյեմբերի 7-ից 11-ը

Իսպանիայի Թագավորություն (ք. Սևիլիա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Ռուստամ Բադասյան

Նաիրուհի Ավետիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համալիր հարկային հսկողության վարչության պետի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Իսպանիայի Թագավորություն, ք. Սևիլիա, նոյեմբերի 7-ից 11-ը

4. Հրավիրող կողմը՝

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումը

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

ՀՀ-ն 2015 թվականից հանդիսանում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի (այսուհետ՝ Գլոբալ Ֆորում) անդամ և գործուման նպատակն էր մասնակցել Գլոբալ ֆորումի տարեկան լիագումար նիստին: Միաժամանակ, ս.թ. նոյեմբերի 7-8ը նույն վայրում տեղի է ունեցել Ասիական նախաձեռնության թվով 3-րդ հանդիպումը, որին ևս ՊԵԿ-ը հրավիրված էր մասնակցելու որպես Ասիայի նախաձեռնության լիիրավ անդամ:

6. Քննարկված թեմաները՝

Ս.թ. նոյեմբերի 7-8-ը տեղի ունեցած հանդիպումների ժամանակ քննարկվել է Ասիական նախաձեռնության շրջանակներում արդեն իսկ տեղի ունեցած միջոցառումների ամփոփման արդյունքները, առաջիկա անելիքները, Հնդկաստանի ֆինանսների նախարարի ընտրությունը՝ որպես Ասիական նախաձեռնության համանախագահ և մի շարք այլ ընթացակարգային հարցեր:

Ս.թ. նոյեմբերի 9-11-ը տեղի են ունեցել մի շարք երրկողմ հանդիպումներ: Մասնավորապես ՀՀ ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանը հանդիպել է ՏՀԶԿ և ՄԱԶԾ՝ Հարկային տեսուչների առանց սահմանների ծրագրի ղեկավարի հետ, որի արդյունքում պայմանավորվածություն է ձեռքբերվել շարունակելու համագործակցությունը տրանսֆերային գնագոյացման կարգավորումների կատարելագործման, ինչպես նաև տեղեկությունների ավտոմատ փոխանակման ստանդարտների ներդրման ուղղություններով:

Հաջորդ հանդիպումը տեղի է ունեցել Ճապոնիայի հարկային մարմնի ներկայացուցիչների հետ, որի արդյունքում պայմանավորվածություն է ձեռքբերվել Ասիական զարգացման բանկ հետ համատեղ ՀՀ-ում կազմակերպել Գիտելիքի փոխանակման աշխատանքային համաժողով, որի ընթացքում ՀՀ ՊԵԿ աշխատակիցները հնարավորություն կունենան ծանոթանալու հարկային համաձայնագրերի կիրառման, տեղեկությունների փոխանկման, հարցումների արդյունքում ձեռքբերված տեղեկությունների արդյունավետ օգտագործման ճապոնական փորձին:

Հանդիպում է կայացել նաև Գլոբալ ֆորումի փորձագիտական գնահատման խմբի ղեկավարի հետ՝ քննարկելու ՀՀ փորձագիտական գնահատման գործընթացի ներկա փուլում առկա հնարավոր խնդիրները և դրանց լուծման ուղիները:

Ս.թ. նոյեմբերի 9-11-ը հանդիպումները եղել են բազմակողմ, որի ընթացքում Գլոբալ ֆորումի 165 երկրներից թվով 400 ներկայացուցիչներ մասնակցել են Գլոբալ ֆորումի իրավասություններին առնչվող հարցերի քննարկմանը, մասնավորապես տեղեկությունների փոխանակման՝ ըստ հարցման և ավտոման փոխանակման ստանդարտների ներդրման ուղղությամբ իրականացված և իրականացվելիք աշխատանքներին, կրիպտոակտիվների վերաբերյալ տեղեկությունների

ներկայացման նոր ստանդարտի ուղղությամբ կատարված աշխատանքներին, Գլոբալ ֆորումի նոր նախաձեռնությունների՝ վերապատրաստողների վերապատրաստման և Հարկային թափանցիկության օրակարգում կանանց դերի բարձրացմանն ուղղված աշխատանքներին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ս.թ. նոյեմբերի 10-ին զեկույցով է հանդես եկել ՀՀ ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանը՝ ներկայացնելով հարցումների հիման վրա հարկային տեղեկությունների միջազգային փոխանակման հայաստանյան փորձը: Նա ներկայացրել է Հայաստանում տեղեկությունների փոխանակման ՏՀԶԿ ստանդարտների ներդրման գործընթացը, աշխատանքների կազմակերպումը և ձեռքբերված արդյունքները: Այդ գործընթացում կարևորվել է Գլոբալ Ֆորումի քարտուղարության կողմից տրամադրած փորձագիտական աջակցությունը: Ժողովի մասնակիցների շրջանում առանձնահատուկ հետաքրքրության են արժանացել ՀՀ-ում ներդրված՝ ընկերությունների իրական սեփականատերերի մասին տեղեկությունների հավաքագրման համակարգը, հարկային մարմիններին բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հասանելիության ապահովման նպատակով կիրառված լուծումը, ինչպես նաև ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների ավտոմատացված փոխանակման ստանդարտների ներդրման վերաբերյալ ՀՀ հավանական հանձնառությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ձևաչափը չի ենթադրում որևէ փաստաթղթի ընդունում, սակայն Գլոբալ ֆորումի 165 երկրների կողմից կոնսենսուսի սկզբունքով ընդունվում է կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը և առաջիկա մեկ տարվա անելիքների վերաբերյալ առաջարկությունների փաթեթը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՀ-ն՝ ի դեմս ՀՀ ՊԵԿ-ի, մեկ անգամ ևս հանձնառել է իրականացնել Ասիայի նախաձեռնության և Գլոբալ ֆորումի անդամ անդամակցությունից բխող բոլոր պարտավորությունները, որը ենթադրում է տեղեկությունների փոխանակման և հարկման նպատակող թափանցիկության ստանդարտների ներդրմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունն առավելագույնս բարձրացնող միջոցառումների իրականացում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

16.11.2022